Ապրիլ ամսվա ընթացքում իրականացվել են մեքենա-մեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

Շահագործվող մեքենա-մեխանիզմների պատշաճ շահագործման համար իրականացվել են թվով 11 մեքենաների շարժիչների մասնակի նորոգում, փոխարինվել են հանդարտիչները, հղկվել և կարգավորվել են գլխիկները, փոխարինվել են կայծամուները և ներդիրները:

Թվով 5 մեքենաների մարտկոցները փոխարինվել են նորերով:

Փոխարինվել են թվով 17 մեքենաների կայծամուները, կայծամուփ լարերը, ռելեները, վառոցքի բանալիները և մալուխները:

Թվով 5 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:



Թվով 7 մեքենաների արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Թվով 6 մեքենաների փոխանցման տուփերը նորոգվել են, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 35 անվաղողեր փոխարինվել են, նորոգվել են և կատարվել է դրանց հավասարակշռում:

Վերանորոգվել են, փոխարինվել են թվով 5 մեքենաների և էքսկավատորների բարձր ճնշման ռետինե խողովակները:

Կցորդման համակարգի նորոգումներ են իրականացվել թվով 5 մեքենաների վրա, փոխարինվել են կցորդման սկավառակները, շաղկապման մեխանիզմները, անջատող առանցքակալները և խտաբուկները:

Առջևի համակարգի նորոգում է կատարվել թվով 11 մեքենաների վրա, փոխարինվել են գնդավորները, դեկի ձգաձողերը, ուղղորդիչ վռանները, մեղմիչները, անվակունդի առանցքակալները, հարվածամեղմիչի զսպանակները և հարվածամեղմիչները:

Հետևի համակարգի նորոգումներ են կատարվել թվով 10 մեքենաների վրա, փոխարինվել են կարդանի խաչուկները, ատամնանիփները, առանցքակալները, կիսատնիները, խտաբուկները, մանեկները, սատելիտները:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 4 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:



Փոխարինվել են թվով 45 մեքենա-մեխանիզմների շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղերն ու գտիչները:

Գեներատորի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենաների վրա, փոխարինվել են ածուխները, դիոդային կամրջակները, առանցքակալները և տուլկիները:

Փոխարինվել են թվով 3 մեքենաների նստատեղերը: Զոդման աշխատանքներ են իրականացվել թվով 6 մեքենա-մեխանիզմների վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:





# ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ





## 2.1. Բաժանորդների տվյալներ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: Գործընթացի առավել աղյուսավետ կազմակերպման համար ԵՏՍՍ-ում ներգրավվել են 165, իսկ ՄՏՍՍ-ում 120 պայմանագրային աշխատակիցներ: 01.05.2018թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 179.638 (կամ մոտ 45.2%), իսկ ՄՏՍՍ-ում 145.683 (կամ մոտ 54.3%), նոր պայմանագրեր:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Ծառայություններ ստացող բաժանորդների թիվը	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	292.342	171.527	58.7
2		Իրավաբանական անձ	14.005	8.111	57.9
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	185.041	147.076	79.5
2		Իրավաբանական անձ	7.709	5.944	77.1
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	477.383	318.603	66.7
		Իրավաբանական անձ	21.714	14.055	64.7

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները ապրիլ ամսվա դրությամբ բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Գործող բաժանորդների ընդհանուր քանակը	Ծախսող բաժանորդների քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	395.153	292.342	74.0
2		Իրավաբանական անձ	19.740	14.005	70.9
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	318.693	185.041	58.1
2		Իրավաբանական անձ	13.009	7.709	59.3
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	713.846	477.383	66.9
		Իրավաբանական անձ	32.749	21.714	66.3

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:

## 2.2. Հասույթ


Շարունակվում է կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ, ավել զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս հատուկ դիտահորերում, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունները:


Բոլոր փոխարինված ջրաչափերը ուղարկվում են լաբորատոր ստուգաչափման: Ապրիլ ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 3608, իսկ ՄՏՍՍ-ում՝ 404 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	04.2018թ. ստուգաչափված ջրաչափերի քանակը	որից		
				Սարքին	Անսարք	Միջամտած
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	2349	1564	527	258
2		Իրավաբանական անձ Ընդամենը	143	89	36	18
			2492	1653	563	276
1	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	359	215	95	49
2		Իրավաբանական անձ Ընդամենը	45	28	16	1
			404	243	111	50

Ստուգաչափված ջրաչափեր (Երևան)



Ստուգաչափված ջրաչափեր (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասը ունեն խնդիրներ: «Միջամտած» ջրաչափերի մասով կազմվել են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիք ամսում Բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել մոտ 157.307 հազ.մ3 վերահաշվակված հասույթ:

Ստորև, գրաֆիկային տեսքով, բերված է 2018թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)




2018թ. ապրիլ ամսին Ընկերության Առևտրային Տնօրինությունների կողմից ձևավորված հասույթի առաջադրանքի կատարողական ցուցանիշները բերված են ստորև՝ աղյուսակի տեսքով.


Տարածաշրջան	Ամիս	Առաջադրանք հազ.մ <sup>3</sup>	Փաստացի հազ.մ <sup>3</sup>	Տարբերություն %, հազ.մ <sup>3</sup>
Երևան	Ապրիլ	6.222	6.227	0.08
Մարզեր		3.143	3.023	-3.90
Ընդամենը		9.365	9.520	-1.22

Ստորև բերված գրաֆիկում արտացոլված են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական սպառման ծավալների վերաբերյալ տվյալները.

Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Երևան)



Ջրաչափով մեկ բնակիչ-բաժանորդի միջին ամսական ծախսը (Մարզեր)



### 2.3. Գանձուև

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Ապրիլ ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 962 մլն. դրամ, իսկ ՄՏՍՏ-ում՝ 476 մլն. դրամ: Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով Ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով, հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դաղարեցումներ, մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը: Ընկերության ձևավորված հասույթի դիմաց գանձման առաջադրանքի կատարման տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Գանձում	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Ընդամենը
Երևան	Առաջադրանք	1.145.130	1.136.846	1.124.295	1.092.631	4.498.902
	Հավաքագրում	809.156	950.219	1.113.310	961.906	3.834.591
	%	70.66	83.58	99.02	88.04	85.23
Մարզեր	Առաջադրանք	485.310	471.395	415.475	464.364	1.836.544
	Հավաքագրում	404.088	443.632	490.015	476.166	1.813.902
	%	83.26	94.11	117.94	102.54	98.77
Ընդամենը	Առաջադրանք	1.630.440	1.608.241	1.539.770	1.556.995	6.335.446
	Հավաքագրում	1.213.244	1.393.850	1.603.325	1.438.073	5.648.493
	%	74.41	86.67	104.13	92.36	89.16

### 2.4 Դեբիտորական պարտքեր

Տարածաշրջանների Առևտրային Տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցեր կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 58 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 4.10 մլն. դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 76 պարտքի մարման ժամանակացույց, մոտ 5.7 մլն. դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ խոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափսը և պարտատերերի ցուցակները ներկայացվում են Իրավաբանական վարչություն:

Ստորև, աղյուսակային տեսքով, ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը՝ ըստ քանակի և գումարի:

Դատարան ներկայացված գործերի քանակը, 2018թ		Բավարարված		Մերժված		2017-2018թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
509	70.202.818	310	27.552.676	8	442.851	2495	228.885.174	162	15.988.793

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում, իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դաղարեցվում է կամ պարքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:




Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.05.2018թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում մարտ ամսվա հասույթ (մլն.դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	2.323.3	1.157.4
Բնակիչ-բաժանորդներ	1.559.3	733.4
Իրավաբանական անձեր	764.0	424.0
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1.749.4	517.1
Բնակիչ-բաժանորդներ	1.447.5	383.6
Իրավաբանական անձեր	301.8	133.5
Ընդամենը, այդ թվում	4.072.7	1.674.5
Բնակիչ-բաժանորդներ	3.006.8	1.117.0
Իրավաբանական անձեր	1.065.8	557.5


Հարկ է նշել, որ Մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չի առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 93.74մլն. դրամը կուտակվել է երկու բաժանորդներին՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ին և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքին մեծածախ սակագնով մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց՝ պարբերաբար չվճարելու պատճառով:

2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Երևան)



2018թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



## 2.5 Ջրաչափեր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդների տվյալների բազայում 01.05.2018թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակի տեսքով.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	385.649	290.329	75.28	19.188	14.001	72.97
	Առանց ջրաչափի	9.504	2.013	21.18	552	4	0.72
Մարզեր	Ջրաչափով	283.187	179.114	63.25	12.135	7.704	63.49
	Առանց ջրաչափի	35.506	5.927	16.69	874	5	0.57
Ընդամենը	Ջրաչափով	668.836	469.443	70.19	31.323	21.705	69.29
	Առանց ջրաչափի	45.010	7.940	17.64	1.426	9	0.63

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ տվյալների բազայում 01.05.2018թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	511.174	277.376	54.26	21.897	3.737	17.71
Մարզեր	329.579	80.368	24.39	13.975	1.676	11.99
Ընդամենը	840.753	357.744	42.55	35.872	5.413	15.09

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում նոր տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 4.458, իսկ Մարզերում 1.796 հատ ջրաչափական սարք:

Այդ թվում ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 164 իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 348 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա: Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

### Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր

Հասցե	Ջրաչափերի ընդամենը քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Շերամի	5.866	4.795	81.7
Սվաճյան	1.461	1.193	81.7
Օհանովի	1.687	1.255	74.4
Ջ.Անդրանիկի	382	299	78.3
Ա.Բաբաջանյան	1.530	789	51.6
ԸՆԴԱՄԵՆԸ	10.926	8.331	76.2

Շարունակվում են Նոր Նորքի 7-րդ զանգվածի և Ջրվեժի Մայակ-Բանավան թաղամասերում թաղամասային ծրագրով ջրաչափերի փոխարինման աշխատանքները: 2018թ. ապրիլ ամսից մեկնարկել են Նոր Նորքի 5-րդ և 8-րդ զանգվածների ջրաչափերի փոխարինման աշխատանքները:

*Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր*

Հասցե	Ջրաչափերի ընդանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Ջրվեժ Մայակ թաղ.	1.809	1.446	79.9
Ջրվեժ Բանավան թաղ.	1.360	1.121	82.4
5 գանգված	3.231	1.734	53.7
7 գանգված	4.470	3.045	68.1
8 գանգված	1.632	881	54.0
ԸՆԴԱՄԵՆԸ	12.502	8.227	65.8

«Վանաձոր» տեղամասում Ընկերության Վարչական և Տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է մոտ 3000 բաժանորդների ջրաչափերի փոխարինման պիլոտային ծրագիր: Ապրիլ ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են կատարվել թվով 7 հասցեներում, որտեղ առկա 1297 ջրաչափից ապրիլին փոխարինվել է 742 ջրաչափ (մոտ 57,2%):

*Կատարված աշխատանքների հակիրճ նկարագիր*

Հասցե	Ջրաչափերի ընդանուր քանակը	Փոխարինված ջրաչափերի քանակը	%
Ք.Վանաձոր, Իսահակյան	201	91	45.3
Ք.Վանաձոր, Իսահակյան 1 նրբ.	37	16	43.2
Ք.Վանաձոր, Իսահակյան 2 նրբ.	116	56	48.3
Ք.Վանաձոր, Ավետիսյան	74	47	63.5
Ք.Վանաձոր, Աղայան	453	325	71.7
Ք.Վանաձոր, Պ.Սևակի	161	98	60.9
Ք.Վանաձոր, Շինարարների ԸՆԴԱՄԵՆԸ	1,297	742	57.2

**2.6 Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում**

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են ՏՏ տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:




Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	152	88.699	15.933.779
Մարզեր	223	101.675	17.319.805
Ընդամենը	375	190.374	33.253.584



# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՈՒՆ










### 3.1. Ջրամատակարարման շարունակականություն


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված են Երևան քաղաքի ապրիլ ամսվա շարունակականության տվյալները՝ 98.5%, որոնք 0.5%-ով ավել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ: Մյուս բոլոր քաղաքների և գյուղական համայնքների համար ջրամատակարարման փաստացի տևողության և հայտարարված գրաֆիկների միջև դեռևս առկա է զգալի տարբերություն:

Ջրամատակարարման շարունակականություն (Երևան)





Հաշվետու ամսվա ընթացքում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինություններում թվով 45 ՃԿՓ-ների վրա տեղադրվել են ճնշման լոգերներ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված ՃԿՓ-ներից 5-ը անսարք են: Անսարքությունները վերացվել են համապատասխան ստորաբաժանման կողմից: Ստորև ներկայացված են կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լոգերների գրաֆիկները.





Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից խողովակաշարի ներքին ուսումնասիրման տեսախցիկով ուսումնասիրվել է «Ղազարավան-Էջմիածին» ջրատար համակարգի մի հատվածը, որին միացվել է «Ճալեր» ինքնաբուխ խորքային հորը մոտ 10լ/վ ջրաքանակով: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ միացման չոր խցից մոտ 28մ հեռավորության վրա ջրատարը մասամբ խցափակված է, ինչը խոչնդոտում է դեպի մայր ջրատար ջրի հոսքին: Խողովակը բացելուց հետո պարզվել է, որ արգելքի պատճառը երկաթյա թիթեղն է: Այն տեղադրվել էր ապօրինի միացմանն անհրաժեշտ ճնշում ապահովելու համար: Ե վ արգելքը, և ապօրինի միացումը վերացվել են ապահովելով ջրի նորմալ հոսքը դեպի ջրատար:






### 3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում





Էներգովերահսկողության խմբի աշխատանքների, վերահսկողության հաշվառման բարելավման և պոմպերի աշխատանքի դադարեցման արդյունքում էլ.էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 11.240կՎտ/ժ (2.43%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների ծախսերին ինչպես խախտումների կանխման, այդպես էլ ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ստորև գրաֆիկական տեսքով ներկայացված են ապրիլ ամսվա ընթացքում էլ.էներգիայի տնտեսում ունեցող հասցեները.




Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 103 հասցե: Թվով 4 պոմպակայանում հայտնաբերվել և վերացվել են թերություններ:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացված վերահսկողության արդյունքում էլ.էներգիայի ծախսը նվազել է 14.021կՎտ/ժ (42%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:




● Շիրակ քաղաքում տեղադրված ընթերցվող էլ.հաշվիչների և իրականացված վերահսկողության շնորհիվ էլ.էներգիայի ծախսը նվազել է 19.518կՎտ/ժ (34%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:



Ապրիլ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը ավելացել է ամսական 77.833կՎտ/ժ (9.06%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


*Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ.էներգիա*






Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 366.617կՎտ/ժ (5.81%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ.էներգիա*



Ընդհանուր էլ. էներգիայի ծախսը նվազել է ամսական 382.314կՎտ/ժ կամ (8.89%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

*«Վեդիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ.էներգիա*



Հաշվետու ժամանակահատվածում թվով 40 խոշոր պոմպակայանում էլ.մատակարարման իսպիանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

**3.3. ԱՏՀ խմբի կատարած աշխատանքներ**

- Տեղամասերի սպասարկման տարածքներում իրականացված վթարավերականգնողական աշխատանքների շրջանակներում ջրագծերի և կոյուղագծերի քարտեզագրում՝ ըստ երկարությունների
- ՕԿՁ-ների անվանումների և տեղադիրքի ճշգրտում «Excel» ձևաչափով՝ հետագայում ԱՏ համակարգում համապատասխան բազա ստեղծելու նպատակով:
- Գյումրի քաղաքի ջրամատակարարման համակարգի սխեմայի գծագրում «Autocad» ծրագրով:
- «Ինտերակտիվ» համակարգում տեղամասերի մասնագետ-տեսուչների հետ իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում: Հավաքագրված տեղեկատվության ներմուծում ԱՏ համակարգ և փոխանցում համապատասխան ստորաբաժանում՝ բաժանորդների տվյալների բազայի թարմացման նպատակով:
- Շահագործման ՏՏ-ների լոգերների գոտիների և լոգերների քարտեզների տվյալների բազաների համեմատում և ճշգրտում:
- Երևան քաղաքի բաժանորդների ֆիզիկական և իրավաբանական կողերի առանձնացում՝ ըստ ՏՏ-ների,

ջրամատակարարման գոտիների, լոգերների գոտիների և ջրատարների:

- «Excel» ձևաչափով աղբյուրների, ՕԿՁ-ների, նմուշառման կետերի, ջրի մաքրման կայանների, ինչպես նաև կեղտաջրերի մաքրման կայանների անվանուժանների և տեղադիրքերի կոորդինատների վերաբերյալ տեղեկատվության պատրաստում և ըստ պահանջի ներկայացնելու համար:

- ՀՀ տարածքում տեղադրված ծախսաչափերի և պոմպակայանների տեղադիրքերի ճշտում և համապատասխան տեղեկատվության հիման վրա ԱՏՀ-ում տվյալների բազայի ստեղծում: «Excel» ձևաչափով լրացված տեղեկատվության տրամադրում՝ ըստ պահանջի:

- ԱՏ համակարգում լոգերների բազայի թարմացում, ինչպես նաև «Excel» ձևաչափով լոգերների վերաբերյալ տեղեկատվության թարմացում:

- Երևան քաղաքի ջրատար համակարգի և ջրամբարների սխեմայի թվայնացում «AutoCad» ծրագրում:

- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող տարածքների (Շիրակ, Լոռի) ՕԿՁ-ների վերաբերյալ «Auto-cad» ձևաչափով առկա տեղեկատվության տեղափոխում «ArcGis» բազաներ ստեղծելու նպատակով:


- ԱՏ համակարգով մաթեմատիկական, վիճակագրական վերլուծությունների ուսումնասիրություն՝ ելնելով բաժնի առջև ծագած խնդրիներից: Ուսումնասիրությունից և կիրառումից հետո համապատասխան գործիքների առանձնացում՝ հետագայում նմանատիպ խնդրների լուծման գործընթացում կիրառելու նպատակով:

- «Bentley sustaining infrastructure»-ի կողմից առաջարկվող փաթեթների ուսումնասիրություն՝ ենթակառուցվածքների հիդրավլիկ մոդելավորման նպատակով: Այս գործընթացը գտնվում է փորձարկման փուլում, մոդելավորման նպատակով ԱՏ համակարգում կատարվում է նաև տվյալների մաքրում:


### 3.4. Կարգավարման խմբի աշխատանքներ

- «LOCATOR» ծրագրի միջոցով ստացված տվյալներից պարզվել է, որ Նուբարաշենից դեպի Արին Բերդ խճուղի ընկած հատվածում ջրագիծը վթարվել է, քանի որ Նուբարաշենում տեղադրված ջրաչափը 1 ժամում ֆիքսում էր 1215լ/վ, իսկ Արին-Բերդ խճուղում տեղադրված ջրաչափի ցուցմունքը 940լ/վ-ից կտրուկ նվազել էր՝ հասնելով 850լ/վ: Այդ մասին տեղեկացվել է ջրատար համակարգերի կարգավորման խմբին, ապա «Արևելք» ՏՏ-ի աշխատակիցներին: Վթարը վերացնելու համար անհրաժեշտ էր «Գառնի» պոմպակայանից անջատել պոմպերը, իսկ փասցած ինքնահոս ջրաքանակը ջրթափ փականի միջոցով հեռացնել, որպեսզի վթարված հատվածում հնարավոր լինի իրականացնել զոդման աշխատանքներ:

Ստորև ներկայացվում են Նուբարաշենում և Արին Բերդ խճուղում տեղադրված ջրաչափերի գրաֆիկական պատկերները:




● Աշտարակ քաղաքը ջրաքանակով սնուցող աղբյուրներից է «Սաղմոսավան»։ Աղբյուրից դեպի Աշտարակ քաղաք մղվող ջրատարի վրա տեղադրված ջրաչափի տվյալներից պարզվել էր, որ առկա էր վթար, քանի որ սովորաբար ջրաչափը 1 ժամում ֆիքսում էր 115մ3, իսկ վթարի ժամանակ ջրաչափի ցուցմունքը, կտրուկ նվազելով՝ հասել էր մինչև 30մ3-ի։ Այդ մասին տեղեկացվել էր «Աշտարակ» տեղամասը, որի աշխատակիցների կողմից հայտնաբերվել էր վթարի հատվածը, ապա վերացվել զոդման աշխատանքների միջոցով։ Ստորև ներկայացված է «Սաղմոսավան» ջրաղբյուրի ջրաքանակը ֆիքսող ջրաչափի գրաֆիկական պատկերը.



**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ  
ՑԱՆՑ ԵՎ  
ՍԵՐՎԻՍԱՅԻՆ  
ՀԱՄԱԿԱՐԳ**







#### 4.1 Համակարգչային ցանց

Ապրիլ ամսվա ընթացքում իրականացվել են հետևյալ համակարգչային և ցանցային աշխատանքները.

- Համակարգչային բաժնի մասնագետները գործուղվել են Պրահա քաղաք՝ Ինֆորմացիոն Անվտանգության սեմինարին մասնակցելու նպատակով: Ստացել են հանձնարարականներ, ուսումնասիրել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ լոկալ սերվերային միջավայրի տեղակայումը ամպային միջավայրեր, և արդեն Երևանում կազմակերպել են հանդիպումներ «Հայկական Ծրագրեր» և «Լոկատոր» Ընկերությունների մասնագետների հետ, քննարկել հնարավոր քայլերը հիշյալ տեղակայումն առավել սահուն կազմակերպելու համար:

- Աշտարակ քաղաքի Արարատյան 70 հասցեում արխիվի տրամադրված նոր տարածքում կատարվել են համակարգչային և հեռախոսային ցանցերի մոնտաժման աշխատանքներ:

- «Գորիս» և «Մեղրի» տեղամասերում մեքենա-մեխանիզմների գիշերային կայանման հսկողությունը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով մոնտաժվել են տեսահսկման համակարգեր շուրջօրյա տեսաձայնագրմամբ:

- Վանաձոր քաղաքի Ն. Ստեփանյան 2 և Գյումրի քաղաքի Դուդկոյի 1 հասցեներում իրականացվել են համակարգչային և հեռախոսային ցանցերի մոնտաժման աշխատանքներ:

- Հիմնանորոգվել են թվով 10 համակարգիչներ և տրամադրվել Ընկերության ստորաբաժանումներին:

#### 4.2 Ինտերակտիվ համակարգ

Նորագույն տեխնոլոգիաների և ծրագրային ապահովման խմբի կողմից «Ինտերակտիվ» համակարգում կատարվել են մի շարք փոփոխություններ, որոնք վերաբերում են ոռոգման պայմանագրերի կնքման գործառնություններին, ցուցմունքների ֆիքսման բլանկների տարանջատումներին: Վարչական տնօրինության համար կատարվել են ծրագրային լրացումներ, որպեսզի հնարավոր լինի ավտոմատ կերպով, առանց հսկողության, ստանալ փոխարինման ենթակա ջրաչափերի թարմացված ցուցակները:

Մի շարք ծրագրային թարմացումներ են կատարվել փաստաթղթաշրջանառության համակարգում:


#### 4.3 Բջջային օպերատորներ և ինտերնետ


Հաշվետու ամսվա ընթացքում Երևան քաղաքի Ազատության 24 և Վանաձոր քաղաքի Ն.Ստեփանյան 2 հասցեներում միացվել է «VoIP» տեխնոլոգիայով գծային հեռախոսակապ:

#### 4.4 Նոր սարքավորումներ և ծրագրեր

Հաշվետու ամսվա ընթացքում «Արևելք», «ՎՊ» և Գլխավոր Գործառնական Տնօրինությունների համար ձեռք է բերվել մեկական նորագույն բազմաֆունկցիոնալ սարք:

# ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ





Ապրիլ ամսին հիշարժան իրադարձություն է տեղի ունեցել, որը մեծ արձագանք գտավ սպառողների շրջանում: Դա ապրիլի 22-ի Երկիր մոլորակի համաշխարհային օրվա կապակցությամբ միջոցառումն էր: ՀՀ ԳԱԱ-ի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի Երկրաբանության թանգարանի հետ կազմակերպվել է ճանաչողական այց դեպի «Արզնի» ջրաղբյուր, որպես մարտի 22-ի Ջրի համաշխարհային օրվա միջոցառման տրամաբանական շարունակություն:

«Երկիրն առանց պլաստիկի» խորագիրը կրող այցին մասնակցել են 6 կրթահամալիրների սաներ, բնապահպաններ, թանգարանի աշխատակիցներ ու լրագրողներ: Ընդամենը մոտ 80 անձ: Միջոցառումը, չնայած եղանակային անբարենպաստ պայմաններին, անկասկած հաջողվել է: Այցելուները ստացել են գիտելիքներ ջրի արտադրության ու մատակարարման, համակարգի կառուցվածքի ու գործունեության, ջրի որակի մասին: Այսպիսով, Ընկերությունը ունեցավ ևս 80 համախոհ, ովքեր իրենց կրթօջախներում, ընտանիքներում ու ծանոթների շրջանում Արզնիում ստացած տեղեկությունների տարածմամբ կձևավորեն դրական կարծիք «Վեոլիա Ջուր»-ի մասին:



Դրան նպաստել է լավ կազմակերպված նախապատրաստական աշխատանքը: Այցի մասնակիցները կրում էին «Վեոլիա Ջուր» Ընկերության լոգոյով գլխարկ ու կրծքանշան, ձեռքներին ունեին փոքրիկ դրոշմներ: «Արզնի» ջրաղբյուրում նրանց համար կազմակերպվել է նաև հանգիստ ճաշով: Իսկ վերջում՝ «Ջուրը մեր կյանքում» թեմայով մրցույթի հաղթող թիմերը ստացել են մրցանակներ, իսկ բոլոր մասնակիցներն էլ հուշանվերներ գրքեր բնության, ջրի ու կենդանական աշխարհի մասին: Միջոցառումը լուսաբանել են հայկական «Հ2», «Հ3» ու «Կենտրոն» հեռուստաալիքները, ինչպես նաև ԱՊՀ երկրների «Միո» հեռուստաալիքը, ինչը շատ կարևոր էր:

Ապրիլին որոշակիորեն թարմացվել է մարտի վերջին օրերին գործարկված Ընկերության «veolia.am» պաշտոնական կայքէջի բովանդակությունը, հաշվի առնելով 2017թ. թե «Վեոլիա Գրուպ»-ի և թե «Վեոլիա Ջուր»-ի ձեռքբերումները:

Շարունակվում են սպասարկվել Ընկերության «Յութուբյան» ու «Ֆեյսբուքյան» էջերը: Մասնավորապես «Ֆեյսբուքյան» Ընկերության բաժանորդների քանակը ապրիլի առաջին օրերին անցել է 5000-ից: Օրական մոտ 10 նոր բաժանորդ է ավելանում, ինչը վկայում է էջի կենսունակությունն ու տարվող աշխատանքի արդյունավետությունը:

Բացի հասարակությանը Ընկերության գործունեության մասին իրազեկելուց, ֆեյսբուքյան էջը հնարավորություն է տալիս նաև հանրության հետաքրքրության հիման վրա իմանալ սպառողներին առավել հուզող խնդիրները:

Էջում պարբերաբար ցուցադրվել են պայմանագրերի կնքման ու վճարումները ժամանակին կատարելու անհրաժեշտության մասին տեսահոլովակներ, ինչպես նաև սպագրվել Ընկերությունում կատարվող անցուղարձի մասին պատմող հաղորդագրություններ: Այդ ընթացքում օգնություն է ցուցաբերվել Ընկերության Գնումների վարչությանը «Հաղորդակցություն - 2018» ծրագրի իրականացման նպատակով մրցույթ կազմակերպելու գործում: Ապրիլին նախատեսված և հանձնարարված աշխատանքները կատարվել են ողջ ծավալով:

ԻՆՖՈՐՄԱՑԻՆԱԿԱՆ ԶԵՐԱՎՈՒՐ ԳՈՒՆՍՈՒՄԵՐՔ


## Վեոլիա Ջուրը տեղեկացնում է

- Չարգելի բաժանորդներ:
- 1. Չարգելի 1-85, 011.300-185 հեռախոսահամարներով,
  - 2. Գրկ. [com@veolia.am](mailto:com@veolia.am) կ. փոստին,
  - 3. Գրանցվել ցուցադրության կայքում («Մեր աշխատանքը» / «Սեզոնը ծառայություններ» / «Ցուցումների մուտքագրում») և, կատարելով պահանջվող հրահանգները, մուտքագրել ցուցումները,
  - 4. Կարողագրություն ունենալ Veolia ջրի ֆեյսբուքյան էջին,
  - 5. Այցելել Բաժանորդների սպասարկման գրասենյակներ կամ Անտառային ծառայություններ:
- Նրա որում հարկ է նշել բաժանորդային բարոյի համարը, ցրտափի ցուցումները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև դրա լուսանկարը:
- ՕՊԵՐ ՄԵԶ, ՈՐ ՕՊԵՐԵ ԵՏԵ**

**ՈՐԱԿԻ,  
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**







### 6.1 Փաստաթղթերի մշակում

● «Տրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի կողմից Ընկերության մասնագետ-տեսուչների և բանվորների (փականագործների, խողովակաշարողների) միջին-մասնագիտական որակավորման դասընթացների նախապատրաստական աշխատանքների շրջանակներում Ծառայությունը մշակել է վերոգրյալ մասնագիտության աշխատակիցների գիտելիքների նախնական գնահատման հարցաշարեր, որոնց արդյունքների հիման վրա հնարավոր կլինի ձևավորել պիլոտային վերապատրաստման ծրագրի առաջին փուլի մասնակիցների խմբերը:

● Կատարվել են «Բարձր ռիսկերի հետ կապված գործունեության կառավարման ստանդարտների» թվով 5 թարգմանված տարբերակի լրամշակման աշխատանքներ:

● Լրամշակվել է Ընկերության «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող 2018թ. միջոցառումների պլան-ժամանակացույցը» և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի 11.04.2018 թվականի N19Լ հրամանով գործողության մեջ դրվել:

● ՈԱԱ Քառայությունը, ելնելով համակարգերում տեխնածին վթարների կանխարգելմանը և բացառմանը, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում մշակել է թվով 3 հեղուկ քլորով շահագործվող քլորակայանի և թվով 8 էլեկտրական բազմաձախարակի և կամրջակային կոունկի տեխնիկական անվտանգության վկայագրեր:


### 6.2 Համագործակցություն ՀՀ ԱԻ նախարարության հետ

Ղեկավարվելով ՀՀ Կոտայքի մարզպետի 25.01.2018թ. N13-Ա որոշմամբ՝ 23.04.2018թ. քաղաք Աբովյանում «Արևմուտք» ՏՏ-ի «Աբովյան» տեղամասի աշխատակիցների կողմից ՈԱԱ Վարչության համակարգմամբ իրականացվել են հատուկ տակտիկական ուսումնավարժություն (ՀՏՈ), որի շրջանակներում ՈԱԱ Ծառայությունը «Արևմուտք» ՏՏ ղեկավար անձնակազմի հետ մշակել և հաստատել է ՀՏՈ-ի անցկացման վերաբերյալ ներքին իրավական ակտը, անցկացման պլանը, օրացուցային պլանը և ամփոփագիրը:

### 6.3. Դասընթացներ

Վարչությունը՝ ՋՍԳՍ ծառայության հետ համատեղ Ընկերության 35 քլորի օպերատորների համար կազմակերպել և իրականացրել է «Անվտանգության պահանջները կալցիումի հիպոքլորիդի հաբերով աշխատանքի ժամանակ» հրահանգավորում-սեմինար:






ՌԱԱ Ծառայության աշխատակից՝ Գազիկ Զաքարյանը մասնակցել է սույն թվականի ապրիլի 2-6-ը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կողմից կազմակերպված ՀՀ նախարարությունների, պետական այլ գերատեսչությունների և կազմակերպությունների անվտանգության պատասխանատուների համար «Քաղաքացիական պաշտպանության բնագավառում և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պատրաստվածության բարձրացման հարցեր» թեմայով, դասընթացի ավարտին անցել է թեստավորում, որի հիման վրա շնորհվել է հավաստագիր:

Հինք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները՝ ՌԱԱ Ծառայությունը կազմակերպել է պայմանագրային հիմունքներով «Նարեկ Գիտահետազոտական» ՓԲԸ հավատարմագրված փորձագետների հետ Ընկերության ամբարձիչ սարքավորումներով կահավորված ավտոտրանսպորտային միջոցների թվով 9 վարորդի՝ ԱՎՕ շահագործող անձի համար մասնագիտական որակավորման դասընթաց և գիտելիքների ստուգում:




Ղեկավարվելով ՀՀ կառավարության 28.09.2005թ 2388-Ն որոշմամբ հաստատված «Գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգի» պահանջներով, ՌԱԱ վարչությունը պայմանագրային հիմունքներով կազմակերպել է «Էքսպերտ Թեչ» ՄՊԸ-ի կողմից Ընկերության գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող թվով 33 աշխատակցի (վարորդի) «Սեղմված բնական գազով աշխատող ավտոմեքենաների գազային սարքավորումների տեխնիկական շահագործման և անվճանգության կանոնների» առաջնային ուսուցում և վկայականների ստացում:

**Մասնակիցների թիվն ըստ դասընթացների տիպի**



- «Ավտոկռունկներ շահագործող վարորդների որակավորման դասընթաց»
- «Անվտանգության պահանջները կազմակերպող հիպոթրիոի հաբերով աշխատանքի ժամանակ» դասընթաց
- Սեղմված բնական գազով շահագործվող մեքենաների վարորդների վկայականների ստացում/հրահանգավորում
- «Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում ԶՀ նախարարությունների և գերատեսչությունների պատրաստվածության բարձրացման հարցերը» դասընթաց

**Հունվար-ապրիլ 2018 կազմակերպված առողջության և անվտանգության դասընթացների գրաֆիկ**





«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ  
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1  
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա  
E-mail: [info@vjur.am](mailto:info@vjur.am)

